ՀՏԴ 902/904(479.25)

Doi:10.54503/0135-0536-2024.2-150

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՄԻ ԽՈՒՄԲ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ դամբարան, կիմերական, վաղ երկաթի դարաշրջան, մշակույթ, զուգահեռներ, համաժամանակյա, թվագրություն, հեծյալ ռազմիկ, ուղեկցող գույք, լկամ:

Նախաբան

Հայկական լեռնաշխարհում կիմերական մշակույթի առկայության փաստն այժմ կարելի է ապացուցված համարել: Մշակութային այդ համալիրներն առանձնացնելիս առաջնորդվել ենք տեսական այն դրույթով, որ մշակույթն առաջնություն ունի տիպի նկատմամբ[1]: Հնագիտական հիշյալ համալիրներն առանձնացնելու համար ներմուծել ենք դրանք բնութագրող որոշակի հատկանիշներ, որոնց կիրառության շնորհիվ մեծացել է ուսումնասիրությամբ ստացված արդյունքների պատմական իրականությանը մոտ լինելու հավանականությունը[2]: Հայաստանի կիմերական դամբարաններն առանձնացնելու գործընթացը, սակայն, զերծ չէ դժվարություններից, քանի որ այդ խնդրում առաջացել է հակասական մի իրավիճակ: Պարզվում է, որ ակնհայտ կիմերական հատկանիշներով օժտված և ուսումնասիրողների կողմից մ. թ. ա. VIII դ. վերջ – VII/VI դդ. թվագրվող հնագիտական մի շարք փակ համալիրների զուգահեռները հնարավոր է դիտել մ. թ. ա. II հազարամյակի վերջ – I հազարամյակի առաջին երկու-երեք դարերին կամ, ընդհանուր առմամբ, վաղ երկաթի դարաշրջանին վերագրվող դամբանային համալիրներում: Հիշյալ համաժամանակյա հնագիտական փակ համալիրների միջև ժամանակագրական անհամապատասխանությունները վերացնելու նպատակով կներկայացնենք մինչ օրս ենթադրաբար վաղ համարվող այն դամբարանների թվագրության խնդիրները, որոնք կառուցվածքով, թաղման ծիսակարգով և գույքակազմով տիպաբանորեն համասեռ են կիմերական մշակույթը ներկայացնող դամբանային համալիրներին:

* *Ներկայացվել է 15. V. 2024 թ., գրախոսվել է 28. VI. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:*

[1] Клейн. 1991, 121, 243, 244.

[2] *Թումանյան. 2022, 215:*

Վաղ ժամանակաշրջանի վերագրված որոշ դամբարանների մշակութային պատկանելության պարզաբանումը

Շիրակավանի I դամբարանադաշտի մի խումբ դամբարաններ՝ № 11, 12, 13, 27, 29, 31, 32, 50, 53ա, 86, 100, 105, թվագրվել են մ. թ. ա. IX–VIII դդ.[3]: Հետաքրքիր է, որ դրանք՝ իրենց կառուցվածքով, թաղման ծիսակարգով և ուղեկցող գույքի կազմով, ընդհանուր առմամբ, էականորեն չեն տարբերվում նույն հուշարձանի № 67, 75, 120, 122, 123 դամբարաններից, որոնք թվագրվում են մ. թ. ա. VIII–VI դդ.[4] և ունեն կիմերական թաղման համալիրներին բնորոշ մի շարք հատկանիշներ: Թաղման ծեսի առանձին բաղադրիչների վերլուծությամբ պարզվում է, որ վաղ ժամանակաշրջանին վերագրված այդ 12 դամբարանները նույնպես օժտված են որոշակի կիմերական հատկանիշներով: Այսպես, № 29 քարարկղի (առաջին խումբ կամ վաղ փուլ) հատակի երկու հատվածները գտնվել են տարբեր խորությունների վրա, իսկ նույն խմբի № 86 քարարկղը միջնապատով բաժանված է եղել երկու մասի: Բարձր հարթակի առկայությունն է փաստագրված նաև Շիրակավանի հեծյալ ռազմիկի (երկրորդ խումբ կամ ուշ փուլ) դամբարանում: Մարդկանց զոհաբերություններով են ուղեկցվել № 11, 12, 13, 86, 105 դամբանների հիմնական թաղումները: Նույնը փաստագրվել է № 67 դամբարանում: Ձիեր են թաղվել № 11, 12, 27, 50, 86, 100 դամբարաններում: Նման իրավիճակ է առկա նաև № 67 ու 122, ինչպես նաև հեծյալ ռազմիկի դամբարանում: Վաղ ժամանակաշրջանին վերագրված 9 դամբարաններում, ինչպես և կիմերական հատկանիշներով № 67, 122 և հեծյալ ռազմիկի դամբանային համալիրներում, գտնվել են ձիասարքի տարբեր բաղադրիչներ՝ լկամներ, այտաճաններ, ճակատանոցներ (մասնավորապես՝ եռաշրջան կախիկներ, որոնց Լ. Աբրահամյանն անվանում է «տապարացուլ»[5]), զարդակոճակներ, պրկաձողեր և այլն: Բրոնզե պոչուվավոր նետասլաքներ են հայտնաբերվել ինչպես վաղ փուլի 9 դամբարաններում, այնպես էլ ուշ փուլին պատկանող հեծյալ ռազմիկի դամբանում: Սրոցաքարեր են ի հայտ եկել վաղ փուլին վերագրված № 12 և ուշ փուլի № 123 դամբարաններում: Մատնեքներով զարդաբանված միականթ գավաթներ են հայտնաբերվել առաջին խմբի № 32, 53ա, 100 և երկրորդ խմբի № 123 ու հեծյալ ռազմիկի դամբարաններում: Փքուն իրանով երկկանթ սափորներ են առկա վաղ փուլի № 11, 29, 105 և ուշ փուլի № 122 ու № 123 թաղումներում: Ներճկված ապարանջաններ են գտնվել վաղ փուլի № 27, 31, 86 և ուշ փուլի № 75 դամբարաններում, զարդախողովակներ՝ № 53ա և № 122 դամբարաններում: Առաջին խմբի № 105 դամբարանի խեցանոթներն ու պերճանքի առարկաները (նկ. 1) նմանություն են դրսևորում երկրորդ խմբում ներառված № 122 դամբարանի

---

[3] *Թորոսյան, Խնկիկյան, Պետրոսյան. 2002, 97–115:*

[4] *Թորոսյան, Խնկիկյան, Պետրոսյան. 2002, 128–135: Համեմատաբար ուշ թվագրություն ունեցող այս խմբի հետ կքննարկենք նաև Շիրակավանի հեծյալ ռազմիկի դամբարանը, որը հայտնաբերվել է 2015 թ. և թվագրվել մ. թ. ա. VII–VI դդ. (տե՛ս* Khudaverdyan, Khachatryan, Eganyan. 2016, 49–52, fig. 2, 3; Khudaverdyan, Khachatryan, Eganyan. 2017, 52, 53; Худавердян, Хачатрян, Еганян. 2018, 218):

[5] *Աբրահամյան. 2004: Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված հիշյալ առարկաներին նվիրված ուսումնասիրությունները քննարկվել և ընդհանրացվել են հոդվածում (տե՛ս* Avetisyan, Dan, Petrosyan. 2018, 27–63*):*

համապատասխան իրերին (նկ. 2): Բերված օրինակները, որոնք կարելի է դեռ երկար շարունակել, վերաբերում են նույն դամբանադաշտի երկու տարբեր ժամանակագրական փուլերի վերագրվող դամբարաններին, սակայն առադրումները տեղին են նաև Շիրակի այլ դամբանախմբերի համար (Քեթի, Սարապատ, Գուսանագյուղ և այլն)[6]:

Այսպիսով, վաղ երկաթի դարաշրջանին վերագրվող Շիրակավանի հիշյալ դամբարաններն իրենց զուգահեռներն ունեն երկաթի լայն յուրացման դարաշրջանին պատկանող բազմաթիվ այլ դամբանախմբերում: Քանի որ անխաթար փակ համալիրի համար թվագրող կռվան կարող են հանդիսանալ միայն ուշ ժամանակագրություն ունեցող իրողությունները կամ առարկաները, ուստի մ. թ. ա. IX–VIII դդ. վերագրվող Շիրակավանի դամբարանները ճիշտ կլինի թվագրել մ. թ. ա. VIII դ. վերջ – VII դ. առաջին կեսով:



Նկ. 1. Շիրակավանի № 105 դամբարանի ուղեկցող գույքը (ըստ Թ ո ր ո ս յ ա ն և ա յ լ ք. 2002, աղ. LXXVI):



Նկ. 2. Շիրակավանի № 122 դամբարանի ուղեկցող գույքը (ըստ Թ ո ր ո ս յ ա ն և ա յ լ ք. 2002, աղ. LXXXIII):

Խնդրո առարկա դամբանային համալիրներից մեկը պատահականորեն հայտնաբերվել է Շիրակի մարզի Արթիկի ենթաշրջանի Վարդաքար գյուղում (նկ. 3): Հետազոտելով խաթարված դամբարանը՝ Տ. Խաչատրյանն առկա գտածոների հիման վրա այն թվագրել է մ. թ. ա. II–I հազարամյակների սահմանագծով[7]: Հ. Մարտիրոսյանը փաստացի համաձայնվել է նրա հետ՝ դամբարանը

[6] T u m a n y a n. 2017, 198.

[7] Х а ч а т р я н. 1961, 69.

թվագրելով մ. թ. ա. XI դ. վերջ – X դ.[8]: Հետագայում Տ. Խաչատրյանն ավելի վաղ է դարձրել նախկինում առաջարկված ժամանակագրությունն ու Վարդաքարի խաթարված դամբարանը թվագրել է մ. թ. ա. XII–XI դդ.[9]: Մինչդեռ հաշվի առնելով այսօրվա պատկերացումները՝ բերվող զուգահեռներից այլ եզրակացության կարելի է հանգել: Որպես Վարդաքարի դամբարանում հայտնաբերված զարդակոճակի և եռաշրջան կախիկների զուգահեռներ բերվում են Տոլորսի համապատասխան արտեֆակտերը, իսկ սևանյան տիպի դաշույնի ու միականթ սափորի նմանակները փնտրվում են Աստղաձորի հավաքածուներում[10]: Հ. Մարտիրոսյանը Վարդաքար–Տոլորս առաջադրումների շրջանակում քննարկում է նաև բրոնզե պոչուկավոր նետասլաքները, իսկ որպես երկժանու զուգահեռ՝ Սևանի ավազանի և Լոռու հուշարձաններում ի հայտ եկած նմանօրինակ իրերի հետ, նշում է նաև Գյումրիի օրինակը[11]:



Նկ. 3. Վարդաքարի դամբարանի ուղեկցող գույքը (ըստ Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 1964, таб. XVI):

Այժմ հնարավորություն է ստեղծվել Վարդաքարի համալիրի զուգահեռներն ամբողջությամբ նախևառաջ փնտրել Շիրակում: Բավական է ասել, որ ձիու ճակատանոց հանդիսացող եռաշրջան կախիկները բազմիցս հանդիպում են Շիրակի կիմերական հատկանիշներով դամբարաններում (Սպանդարյանի № 2, Շիրակավանի № 11, 12, 27, 29, 31, 32, 50, 100): Ինչ վերաբերում է հարթ տապարին, ապա դրա «կրկնօրինակները» հայտնի են Գյումրիից[12] ու Շիրակավանի առաջին դամբանադաշտից[13]: Տ. Խաչատրյանը, որպես հարթ տապարի զուգահեռի հայտնաբերման վայր, նշում է փոքրասիական Օրդուն[14]: Վարդաքարի սակրին նմանվող օրինակների ձուլման կաղապար հայտնաբերվել է Գյումրիում[15]: Հիշյալ սակրի զուգահեռները Հ. Մարտիրոսյանը խորաթափանցորեն դիտում է Փոքր Ասիայի հնագիտական «գանձերում»[16]: Հետաքրքիր է նաև, որ Վարդաքարի բրոնզե դուրը Տ. Խաչատրյանը համադրում է Կիպրո-

[8] Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 1964, 157.
[9] Հ ա չ ա տ ր յ ա ն. 1975, 16.
[10] Հ ա չ ա տ ր յ ա ն. 1961, 62, 66–68.
[11] Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 1964, 157.
[12] Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 1954, 113, рис. 46, 3, 4.
[13] Թ ո ր ո ս յ ա ն, Խ ն կ ի կ յ ա ն, Պ ե տ ր ո ս յ ա ն. 2002, 154, աղ. LX, 14:
[14] Հ ա չ ա տ ր յ ա ն. 1961, 59.
[15] Հ ա չ ա տ ր յ ա ն. 1961, 55.
[16] Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 1964, 159.

վոդսկի ու Պյատիգորսկի դամբանաբլուրներում գտնված նմուշներին[17]*: «Սևանյան» տիպի բրոնզե դաշույնն իր զուգահեռն ունի Շիրակավանի առաջին դամբանադաշտի գույքակազմում: Ձիասարքի մաս կազմող սեգմենտաձև կոճակի նմանները հանդիպում են Ոսկեհասկի*[18] *№ 2, 7, Շիրակավանի*[19] *№ 11, 12, 27, 31, 50, 53ա և մ. թ. ա. VIII դարավերջ – VII դ. առաջին կեսով թվագրվող այլ դամբարաններում: Շիրակի մի խումբ դամբարաններում դրանք համատեղվում են եռաշրջան կախիկների ու «սևանյան» տիպի դաշույնների հետ:*

Բրոնզե պոչուկավոր նետասլաքները նույնպես խիստ տարածված են Շիրակի կիմերական հատկանիշներով դամբանադաշտերում: Տ. Խաչատրյանը նշում է, որ Վարդաքարի նեղվիզ միականթ սափորի տիպի խեցանոթները լայն տարածում են գտնում ուրարտական ժամանակաշրջանում, իսկ խոհանոցային կճուճը կարող էր կիրառություն գտնել երկաթի լայն յուրացման դարաշրջանում[20]*: Այդ դեպքում անհասկանալի է, թե քննարկվող դամբարանը թվագրելիս ինչո՞ւ չի կիրառվել հնագիտությանը հայտնի այն սկզբունքը, որ փակ համալիրների համար կարող են թվագրող հանդիսանալ ուշ ժամանակագրություն ունեցող առարկաները կամ իրողությունները: Փորձել ենք նաև ապացուցել, որ Տոլորսի, Աստղաձորի ու դրանց համաժամանակյա մյուս համալիրները, որոնց հետ առաջարկվել է քննարկվող դամբարանը, այսօր կարելի է թվագրել մ. թ. ա. VII–VI դդ. երրորդ քառորդով*[21]*: Կարծում ենք՝ Վարդաքարի դամբարանը, որտեղ նշանավոր հեծյալ է թաղվել, կարելի է թվագրել մ. թ. ա. VIII դ. վերջ – VII դ. առաջին կեսով:*

Սպանդարյանի (նախկին՝ Կուլիջանի) դամբարաններից մեկը՝ հայտնաբերված ուղեկցող գույքի հիման վրա, վերագրվել է մ. թ. ա. 1100–900 թթ., այսինքն՝ մ. թ. ա. XI–X դդ.: Ուղեկցող գույքի կազմում փքուն իրանով երկկանթ սափորների առկայության հանգամանքը հիմք է տվել Գ. Արեշյանին խեցանոթների այդ տիպը մատնանշել նաև Արթիկի № 48 և № 89 կատակոմբներում, որոնք, նրա կարծիքով, պետք է թվագրել մ. թ. ա. XII դ., չբացառելով այդ ժամանակագրության «աննշան հնացման հնարավորությունը»: Քննարկվող դամբարանում հայտնաբերվել է նաև լկամ, որի երկու մասերն իրար են կապվել կաշվի օգնությամբ[22]*: Արթիկի № 218 դամբարանում նույնպես հայտնաբերվել է կաշվով իրար կապվող ոլորուն ձողերով երկմաս մի իր: Եթե այդ առարկան, իրոք, լկամ է, ինչպես կարծում են հայ հետազոտողները*[23]*, ապա հիշյալ դամբարանում հեծյալ է թաղվել: Տ. Խաչատրյանը տվյալ արտեֆակտի*

---

[17] *Հ. Մարտիրոսյանի և Տ. Խաչատրյանի ուսումնասիրությունները հուշում են, որ Վարդաքարի դամբարանը մշակութային առնչություններ է դրսևորում Հյուսիսային Կովկասի ու Փոքր Ասիայի քոչվորական համալիրների հետ, որոնք, հավանաբար, պատկանել են կիմերական մշակույթին:*

[18] Петросян. 1989, таб. 65, 9, 69, 15.

[19] *Թորոսյան, Խնկիկյան, Պետրոսյան. 2002, աղ. LXVI, LXVII, LXIX, LXXI, LXXIII:*

[20] Хачатрян. 1961, 68, 69.

[21] Туманян. 2019, 29, 32.

[22] Арешян. 1974, 195–198, рис. 2.

[23] Арешян. 1974, 198; Хачатрян. 1975, 236–237; Хачатрян. 1979, 51, 199.

զուգահեռները տեսնում է հարավարևելյան Եվրոպայի տափաստաններում՝ Կոստրոմսկայա ավանի մոտ գտնվող «I Ռազմենի» դամբանաբլրի լկամների խմբում[24]*: Կուբանյան հիշյալ դամբանաբլուրը թվագրվել է մ. թ. ա. VIII–VII դդ.*[25]*: Ա. Իվանչիկը համաձայն չէ Տ. Խաչատրյանի հետ: Նա կասկածի տակ է դնում քննարկվող առարկայի լկամ լինելու իրողությունը և համարում է, որ հայ հնագետի կողմից որպես զուգահեռ բերված կուբանյան լկամները կապ չունեն Արթիկի № 218 դամբարանի հիշյալ իրի հետ*[26]*: Մյուս կողմից, Ա. Իվանչիկն ընդունում է Տ. Խաչատրյանի իրավացիությունը, երբ վերջինս քննարկվող իրի անալոգիան փնտրում է Գյումրիի № 8 սալարկղում, որը Հ. Մարտիրոսյանը վերագրել է երկաթի լայն յուրացման դարաշրջանին*[27]*: Այստեղ էական է նշված վերջին հանգամանքը, որը հիմք է տալիս Արթիկի № 218 կատակոմբը թվագրել մ. թ. ա. VIII դարավերջ – VII դ. սկզբով*[28]*: Ի դեպ, Տ. Խաչատրյանը կարծում էր, որ Սպանդարյանի հիշյալ դամբարանը կապակցվում է Արթիկի III խմբի և Գյումրիի այն համալիրներին, որոնք վերագրվում են մ. թ. ա. I հազարամյակի սկզբնական դարերին*[29]*:*

Անդրադառնալով ուռուցիկ իրանով երկկանթ սափորներին՝ հավելենք, որ նման տիպի խեցանոթներ հայտնաբերվել են նաև Արթիկի № 218, 221, 223, 420 կատակոմբներում[30]*: Սպանդարյանի քննարկվող դամբարանում փքուն իրանով երկկանթ սափորները համատեղվում են օղակաձև կանթով նեղվիզ սափորի հետ, ճիշտ նույն կերպ՝ ինչպես Գյումրիի № 8 սալարկղում*[31] *ու Արթիկի № 223 կատակոմբում*[32]*, որտեղ առկա են նաև երկաթի լայն յուրացման դարաշրջանի համալիրներին բնորոշ բրոնզե երկծալ և երկաթե մեկական ապարանջան: Կարծում ենք, ասվածը բավարար է հիմնավորելու, որ Սպանդարյանի կիմերական հատկանիշներով դամբարանը կարելի է թվագրել մ. թ. ա. VIII դ. վերջ – VII դ. սկզբով:*

Մի խումբ դամբարանների թվագրության վերանայման անհրաժեշտությունը՝ կապված դրանց մշակութային նոր մեկնաբանման հետ

Արթիկի ենթաշրջանի Մանթաշի № 3 դամբարանը թվագրվել է մ. թ. ա. XII դարավերջ – XI դարով[33]*: Ննջեցյալի կմախքի բացակայությունը, զոհաբեր-*

---

[24] Хачатрян. 1975, 237.

[25] Иессен. 1953, 81– 82.

[26] Ivantchik. 2001, 160.

[27] Мартиросян. 1954, 110–112; Мартиросян. 1964, 283–284.

[28] *Երկմաս լկամ է առկա նաև Գետաբեկի № 56 դամբարանում: Ա. Իվանովսկու կարծիքով՝ վերջինիս երկու մասերի եզրային փոքրիկ օղակներն իրար են կապվել կաշվի օգնությամբ. տե՛ս* Ивановский. 1911, 128, таб. VII, 3, 6.

[29] Хачатрян. 1975, 23–24.

[30] Хачатрян. 1975, 236, рис. 150; Хачатрян. 1979, 199. *Բերված մի քանի օրինակները միտումնավոր ընտրվել են միայն Արթիկի III խմբի դամբարաններից: Հիշյալ տիպի երկաթեդարյան խեցանոթների հավաքածուն, իրականում, խիստ բազմաքանակ է:*

[31] Мартиросян. 1954, 109, рис. 44, 2, 5.

[32] Хачатрян. 1975, 240, 241, рис. 153, 154; Хачатрян. 1979, 202–203.

[33] Badalyan, Avetisyan. 2007, 209.

ված ձիու ոսկորի առկայությունը և ուղեկցող գույքի քննարկումը ցույց են տալիս, որ գործ ունենք հեծյալ ռազմիկի հուշադամբանի հետ, որտեղ ենթադրվում է դիակի անհասանելիությունը: Դատելով ուղեկցող գույքից՝ ռազմիկը զինված է եղել դաշույնով, գուրզով ու նետերով: Ըստ որում՝ նետասլաքներից մեկը համարվում է սկյութական տիպի, որը հուշում է՝ ենթադրյալ հեծյալ ռազմիկը կարող էր զինված լինել բաղադրյալ փոքր աղեղով: Ավելի ճշգրիտ կլիներ հավաստել, որ քննարկվող երկթե այդ զինատեսակը պատկանում է նետասլաքների կիմերական կամ «վաղսկյութական» տիպին, որի գուգահեռներն առկա են պատմական Գամիրքի (Մաշատհայոյք) և Ծոփքի (Նորշունթեփե) հնագիտական հուշարձաններում[34]*: Թեև երկթե կիմերական նետասլաքը հայտնաբերվել է դամբանթմբի լիցքի պեղումներով, այնուամենայնիվ, այն օրգանապես կապված է ողջ համալիրի հետ, որը կիմերական ակնհայտ հատկանիշներ ունի: Հայտնի է, որ կիմերական թաղման ծեսում հանդիպում են դամբանային երկխուց համալիրներ: Եթե դամբարանի կառուցվածքում նույնիսկ կոր պատի առկայությունը հաշվի չառնենք, ապա այստեղ համատեղվում են բուն կիմերական հատկանիշներից / մարկերներից առնվազն երկուսը՝ ձիու զոհաբերությունը և կիմերական / «վաղսկյութական» տիպի երկթե նետասլաքի առկայությունը: Սրանց անհրաժեշտ է հավելել կիմերական թաղումների համար սովորական որոշ իրերի՝ դաշույնի ու գուրզի, ինչպես նաև միականթ գավաթի և մատնեքավոր խեցանոթի առկայությունը: Թվարկված վերջին երկու խեցանոթների միացյալ հատկանիշներն ասես համատեղվում են Շիրակավանում 2015 թ. հայտնաբերված հեծյալ ռազմիկի դամբարանի մատնեքավոր միականթ գավաթի նկարագրում: Հիմքում ուղղանկյուն փորվածքով վանակատե նետասլաքները և ուլունքների նմանատիպ հավաքածուները նույնպես խորթ չեն կիմերական թաղման համալիրներին:*

Կան մի շարք այլ դամբարաններ, որոնց մշակութային պատկանելության ճշգրտման և, ըստ այդմ՝ թվագրության վերանայման հարցերը վաղուց են հասունացել՝ կապված վերջին տասնամյակների հնագիտական հայտնագործությունների ու պատմահնագիտական հիմնախնդիրների վերաիմաստավորման հետ: Օրինակ՝ Գյումրիի «Կազաչի պոստ» տեղանքում Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից 1931 թ. հայտնաբերված № 4 դամբարանը Հ. Մարտիրոսյանը թվագրել է մ. թ. ա. VIII դարով՝ այն վերագրելով «վաղուրարտական ժամանակաշրջանի տեղական մշակույթին»[35]*: Մինչդեռ դրանից դեռևս մեկ տասնամյակ առաջ նա նշել էր քննարկվող համալիրում հայտնաբերված արտեֆակտերի նմանությունը Գյումրիի № 10 դամբարանի թաղման գույքին, որը, իր իսկ կարծիքով, վերագրվում է քիչ ավելի ուշ ժամանակաշրջանի՝ մ. թ. ա. VII–VI դդ.*[36]*: Քանի որ Հ. Մարտիրոսյանի առավել վաղ դիտարկումները հիշյալ երկու դամբարանների ուղեկցող գույքի նմանության վերաբերյալ այսօր էլ ընդունելի են, ուստի պետք է հրաժարվել «Կազաչի պոստ» տեղանքի № 4 դամբարանը վաղուրարտական ժամանակաշրջա-*

---

[34] I v a n t c h i k. 2001, 65–68, Abb. 28, 45, 50, 30, 5; D ö n m e z. 2007, 61; T s e t s k h l a d z e. 2011, 116.

[35] М а р т и р о с я н. 1964, 211.

[36] М а р т и р о с я н. 1954, 114.

նով թվագրելու միտումից: Այսօրվա պատկերացումներով՝ Գյումրիի քննարկվող դամբարաններում նկատելի են ոչ տեղական (կիմերական) հատկանիշներ: Հավանաբար, այդ թաղման համալիրները կարելի վերագրել մ. թ. ա. VII դ.:

Ոսկեհասկի կատակոմբները՝ համախմբությամբ, թվագրվել են մ. թ. ա. IX–VIII դդ.[37]: Ընդունելի պետք է համարել Հ. Մարտիրոսյանի այն տեսակետը, որ թաղման նմանատեսակ կառույցները Հայաստանի համար բնորոշ չեն[38]: Մասնավորապես, Ոսկեհասկի № 7 կատակոմբում փաստագրվել է թրծակավե շարժական կրակարանի առկայությունը, որը հազվադեպ երևույթ է Հայաստանի խեցեղեն հավաքածոների համար: Միևնույն ժամանակ, Ոսկեհասկի № 2, 4–7 կատակոմբներում հայտնաբերվել են մակույկաձև մշակված սալաքար/դիակալներ, որոնց գուգահեռները հանդիպում են Շիրակավանի № 67 կիմերական ու Կարճաղբյուրի № 23 սկյութական հատկանիշներով դամբարաններում: Այս վերջինները համապատասխանաբար թվագրվել են մ. թ. ա. VII–VI դդ. և մ. թ. ա. VI դ. երկրորդ կեսով[39]: Կարծում ենք, Շիրակավանի № 67 դամբարանը կարելի է թվագրել մ. թ. ա. VIII դ. վերջ – VII դդ. առաջին կեսով: Այսպիսով, նպատակահարմար ենք գտնում նաև վերաթվագրել Ոսկեհասկի կատակոմբները մ. թ. ա. VII դ.:

Վերջին մեկուկես տասնամյակում Հայաստանի ուշբրոնզեդարյան համարված հնագիտական որոշ համալիրները փոքր-ինչ «երիտասարդացնելու» միտում է նկատվում, որը իրավացի ենք համարում: Այսպես, Թալինի № 61 դամբարանը նախապես համադրվել է ուշբրոնզեդարյան այն դամբարանների հետ, որոնք թվագրվում են մ. թ. ա. XIII–XII դդ.[40]: Կարճ ժամանակ անց այն վերագրվել է վաղ երկաթի դարաշրջանին ու թվագրվել մ. թ. ա. XII դ. առաջին կեսով[41]: Քանի որ № 61 դամբարանը համարվում է ամենահինը վաղ երկաթեդարյան դամբարանների շարքում, ուստի այդ խմբի մյուս դամբարանների համար ևս ժամանակագրական փոփոխությունների կարիք է առաջանում: Դրանք համապատասխանորեն պետք է վերաթվագրվեն ավելի ուշ ժամանակաշրջանով:

Վաղ երկաթի դարաշրջանին վերագրվող Հայկական լեռնաշխարհի որոշ դամբարանների «երիտասարդացման» անհրաժեշտությունը նշել են այլ հեղինակներ ևս: Սակայն նրանցից ոմանք հանգել են հակառակ ծայրահեղության՝ ենթադրելով, որ Հարավային Կովկասում բրոնզի ու երկաթի դարերի սահմանաբաժանը մ. թ. ա. VII դարն է (Ա. Տերենոժկին[42], Յու. Վորոնով[43], Մ. Պոգրեբովա[44], Ե. Չերնենկո և Ս. Մախորտիխ[45]): Այդ սխալ հայեցակետի պատճառներից մեկն այն է, որ հիշյալ ուսումնասիրողները հաշվի չեն առել մեր տարա-

[37] Петросян. 1989, 77.

[38] *Մարտիրոսյան. 1969, 23, Թումանյան. 2003, 182:*

[39] *Խնկիկյան. 1999, 20–22, Թորոսյան, Խնկիկյան, Պետրոսյան. 2002, 128, Ենգիբարյան. 2014, 18:*

[40] *Ավետիսյան, Ավետիսյան. 2006, 53:*

[41] Badalyan, Avetisyan. 2007, 252, 254.

[42] Тереножкин. 1971, 80–83.

[43] Воронов. 1980, 218.

[44] Погребова. 2011, 208.

[45] Черненко, Махортых. 1986, 226.

ծաշրջանում բերովի մշակույթների, մասնավորապես՝ կիմերական մշակույթի առկայությունը: Շփոթության պատճառ են հանդիսանում Հարավային Կովկասի հնագիտական այն խառը համալիրները, որոնցում բրոնզե զինատեսակներ են հայտնաբերվում: Այսրկովկասում կիմերական բերովի հնագիտական համալիրների կամ մշակութային առանձին իրողությունների անտեսումը հետազոտողներին կհանգեցնի հակասության: Նրանք ստիպված պիտի լինեն ընդունել, որ պետական կազմավորումների կամ երկաթի լայն տարածման դարաշրջանում՝ մ. թ. ա. VIII դ. վերջ – VII դ., Հայկական լեռնաշխարհում միաժամանակ շարունակում էր գոյատևել նաև ուշ բրոնզի դարաշրջանը: Նման մի հակասական իրավիճակ էլ դիտվում է հարևան տարածաշրջանում: Բ. Կուֆտինը նկատել է, որ Վրաստանում հայտնաբերված կոլխիդա–կոբանյան տիպի բրոնզե մի շարք զինատեսակներ պետք է վերագրել մ. թ. ա. VII դ.: Երկաթե զենքերի առկայության պայմաններում բրոնզե զինատեսակների արտադրությունը շարունակելու հանգամանքը գիտնականը փորձում է հիմնավորել տվյալ տարածքում պղնձի հումքի առատությամբ[46]: Կարծում ենք՝ բերված փաստարկով հնարավոր չէ հիմնավորել անմրցունակ զենքի արտադրությունը:

Եզրակացություն

Հայաստանի վաղ երկաթի դարաշրջանին վերագրված մի շարք դամբարանների մշակութային պատկանելության և թվագրության խնդիրների քննարկումից կարելի է եզրակացնել, որ դրանք հրատապ լուծում են պահանջում: Հնագիտական համալիրը թվագրելիս առանձին առարկաների զուգահեռները փնտրելու տարածված սովորությունը հեռանկար չունի: Այդ սկզբունքին հետևելով՝ լավագույն դեպքում հնարավոր կլինի պարզել տվյալ դամբանային համալիրի կազմավորման ժամանակագրական միջակայքը, բայց ոչ մշակութային պատկանելությունը: Բերված օրինակները ցույց են տալիս, որ տիպաբանության վրա հիմնված ցանկացած հարաբերական թվագրություն ճշգրտման կարիք կունենա, քանի դեռ քննարկվող տարածաշրջանում չեն սահմանազատվել տվյալ դարաշրջանի հնագիտական մշակույթները: Բացի այդ՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անխաթար փակ համալիրների համար պետք է թվագրող հանդիսանան ուշ ժամանակագրություն ունեցող իրողությունները կամ առարկաները:

Առաջնորդվելով այն հիմնադրույթով, որ մշակութային տիպեր ստանալու համար հարկավոր է ելնել կոնկրետ հնագիտական մշակույթից՝ փորձել ենք առանձնացնել կիմերական հատկանիշներով որոշ փակ համալիրներ: Մեր ընտրանքի մեջ են ներառվել Շիրակավանի, Վարդաքարի, Սպանդարյանի, Մանթաշի, Գյումրիի, Ոսկեհասկի և այլ դամբանադաշտերի մի խումբ դամբարաններ, որոնց մշակութային պատկանելությունը հուշում է դրանք քիչ ավելի ուշ ժամանակաշրջանով թվագրելու անհրաժեշտությունը: Այսպիսով, Շիրակի քննարկվող դամբարանները՝ համախմբությամբ, կարելի է թվագրել մ. թ. ա. VIII դարավերջ – VII դարով:

[46] Կ ո ւ ֆ տ ի ն. 1944, 68.

Գարեգին Թումանյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան հնագիտական մշակույթներ, թաղման ծես, կիմերական հնագիտական մշակույթ, մշակութային փոխառնչություններ: Հեղինակ է 5 գրքի և 68 հոդվածի:
ORCID:0000-0002-6696-0093. gstumanyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Լ. Հ. 2004, «Տապարացուլը» լաբիրինթոսում. բրոնզիդարյան մի հորինվածքի պարզաբանման շուրջ. – Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, էջ 12–14:

Ավետիսյան Հ. Գ., Ավետիսյան Պ. Ս. 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ. թ. ա. XI–VI դարերում, Երևան, ԵՊՀ հրատ., 396 էջ:

Ենգիբարյան Ն. Գ. 2014, Սևանի ավազանի մշակույթը մ. թ. ա. VIII–VI դդ. (ըստ դամբարանային համալիրների): «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 27 էջ:

Թորոսյան Ռ. Մ., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա. 2002, Հին Շիրակավան, Երևան, «Գիտություն» հրատ., 259 էջ:

Թումանյան Գ. 2003, Հայաստանի ուշբրոնզեդարյան դամբարանների կառուցվածքը. – ՊԲՀ, № 1, էջ 166–185:

Թումանյան Գ. 2022, Հայկական լեռնաշխարհում կիմերական մշակույթի ուսումնասիրության արդի վիճակը և հեռանկարները. – ՊԲՀ, № 1, էջ 210–223:

Խնկիկյան Օ. 1999, Շիրակավանի մ. թ. ա. VII–VI դարերի դամբարանները. – Գիտական աշխատություններ, II, Գյումրի, «Գիտություն» հրատ., էջ 20–31:

Մարտիրոսյան Հ. Ա. 1969, Ուշբրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 72 էջ:

Арешян Г. Е. 1974, О раннем этапе освоения железа в Армении и на Южном Кавказе. – ИФЖ, № 3, с. 192–212.

Воронов Ю. Н. 1980, О хронологических связях киммерийско-скифской и колхидской культур. – Скифия и Кавказ. Ред. А. Н. Тереножкин. Киев, «Наукова думка», с. 200–218.

Ивановский А. А. 1911, По Закавказью. – Материалы по археологии Кавказа, вып. VI. М., Товарищество типографии А. И. Мамонтова, 194 с.

Иессен А. А. 1953, К вопросу о памятниках VIII–VII вв. до н. э. на юге Европейской части СССР (Новочеркасский клад 1939 г.). – «Советская археология» (М.), XVIII, с. 49–110.

Клейн Л. С. 1991, Археологическая типология. Л., Изд. АН СССР, 448 с.

Куфтин Б. А. 1944, Урартский колумбарий у подошвы Арарата и куро-аракский энеолит. – «Вестник Государственного музея Грузии» (Тбилиси), т. XIII–B, с. 1–171.

Мартиросян А. А. 1954, О древнем поселении и могильнике близ Ленинакана. – «Краткие сообщения Института истории материальной культуры» (М.), вып. 55, с. 106–116.

Мартиросян А. А. 1964, Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, Изд. АН АрмССР, 312 с.

Петросян Л. А. 1989, Раскопки памятников Кети и Воскеаска. Ереван, Изд. АН АрмССР, 125 с.

Погребова М. 2011, Особенности конских захоронений и конского убора в памятниках VIII – первой половины VII вв. до н.э. правобережья Куры. – Археология, этнология, фольклористика Кавказа. Ред. Г. Гамбашидзе. Тбилиси, «Меридиани», с. 208–210.

Тереножкин А. И. 1971, Дата мингечаурских удил. – «Советская археология» (М.), № 4, с. 71–84.

Туманян Г. С. 2019, К вопросу о датировке погребений железного века Армении. – «Российская археология» (М.), № 3, с. 26–39.

Хачатрян Т. С. 1961, Комплекс бронзовых предметов из селения Вардакар. – «Известия общественных наук» АН АрмССР, № 3, с. 55–70.

Хачатрян Т. С. 1975, Древняя культура Ширака. Ереван, Изд. Ереванского университета, 278 с.

Хачатрян Т. С. 1979, Артикский некрополь: Каталог. Ереван, Изд. Ереванского университета, 403 с.

Худавердян А., Хачатрян А., Еганян Л. 2018, История жизни и смерти всадника из памятника Ширакаван (По данным физической антропологии). – По ту сторону Арагаца. Археологические исследования посвященные памяти Т. Хачатряна. Ред. А. Аветисян. Ереван, «Наука», с. 218–224.

Черненко Е. В., Махортых С. В. 1986, Рецензия на кн.: «С.А. Есаян, М.Н. Погребова. Скифские памятники Закавказья. М., 1985». – ИФЖ, № 4, с. 225–229.

Avetisyan P., Dan R., Petrosyan A. 2018, Axes, labyrinths and astral symbols: bronze pendants and pins from the Armenian Highlands. – “Ancient West & East”, vol. 17, pp. 27–63.

Badalyan R., Avetisyan P. 2007, Bronze and Early Iron Age archaeological sites in Armenia, I. Oxford, Archaeopress, 319 p.

Dönmez Ş. 2007, Sinop Province during the Iron Age in the light of new research. – “Anatolia Antiqua” (Istanbul), XV, pp. 59–65.

Ivantchik A. I. 2001, Kimmerier und Skythen. M., Paleograph–Press, 324 S.

Khudaverdyan A., Khachatryan H., Eganyan L. 2016, Multiple trauma in a horse rider from the Late Iron Age cemetery at Shirakavan, Armenia. – “Bioarchaeology of the Near East” (Warsaw), № 10, pp. 47–68.

Khudaverdyan A. Yu., Khachatryan H. H., Eganyan L. G. 2017, The human skeleton from the Late Iron Age burial of Shirakavan (Armenia): a case study. – “Bulletin of the International Association for Paleodontology” (Zagreb), vol. 11, № 2, pp. 51–61.

Tsetskhladze G. R. 2011, The Scythians: Three essays, in G. Tsetskhladze (ed.). The Black Sea, Greece, Anatolia and Europe in the first millennium BC. Leuven–Paris–Walpole, Peeters, pp. 95–139.

Tumanyan G. S. 2017, Cimmerian and Scythian funerary rituals in the South Caucasus.– “Near Eastern Archaeology” (Chicago), Vol. 80, № 3, pp. 196–201.

НОВАЯ ИНТЕРПРЕТАЦИЯ КУЛЬТУРНОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ И ДАТИРОВКА ГРУППЫ ДРЕВНЕЙШИХ ПОГРЕБЕНИЙ АРМЕНИИ

ГАРЕГИН ТУМАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: погребение, киммерийский, ранний железный век, культура, параллели, синхронный, датировка, воин-всадник, сопутствующий материал, удила.

Из обсуждения проблем культурной принадлежности и датировки ряда погребений, прежде отнесенных к раннему железному веку Армении, можно сделать вывод, что они требуют актуального решения. При датировке археологического комплекса распространенная практика отыскивания параллелей отдельных предметов не имеет перспективы. Следуя этому принципу, в лучшем случае можно выяснить временной интервал образования данного археологического комплекса, а не его культурную принадлежность. Приведенные примеры показывают, что основанная на типологии любая относительная хронология будет нуждаться в уточнении, пока в обсуждаемом регионе не разделены археологические культуры данной эпохи. Кроме того, нужно иметь в виду, что для неповрежденных закрытых комплексов датирующими должны быть факты или предметы, имеющие позднюю хронологию.

При выделении некоторых закрытых комплексов: с киммерийскими признаками принят за основу тезис, который гласит: чтобы опознать культурные типы, нужно исходить из конкретной археологической культуры. Культурная принадлежность включенных в выборку групп погребений из Ширакавана, Вардакара, Спандаряна, Манташа, Гюмри, Воскеаска и других могильников наводит на мысль о необходимости датировать их немного более поздним периодом. Таким образом, рассматриваемые погребения Ширака, в совокупности, могут быть датированы концом VIII – VII в. до н. э.

Гарегин Туманян – д. и. н., старший научный сотрудник отдела ранней археологии Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археологическая культура эпох бронзы и железа Армянского нагорья, погребальный обряд, киммерийская археологическая культура, культурные взаимосвязи. Автор 5 книг и 68 статей. ORCID:0000-0002-6696-0093. gstumanyan@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 2

NEW INTERPRETATION OF CULTURAL BELONGING AND DATING OF A GROUP OF ANCIENT SEPULCHRES IN ARMENIA

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

Keywords: sepulchre, Cimmerian, Early Iron Age, culture, parallels, simultaneous, dating, warrior rider, related material, bit.

From the discussion of the issues related to cultural belonging and dating of a number of sepulchres attributed to Early Iron Age of Armenia, one could conclude that these issues need urgent solution. The widespread practice of looking for parallels of separate items when dating sepulchral complex is unpromising. In the best scenario, this approach can enable to identify the time interval of the formation of the given sepulchral complex, but cannot reveal its cultural belonging. Provided examples demonstrate that any typology – based relative dating needs adjustments until the archaeological cultures in the given region are not differentiated. Besides, for intact closed complexes, the dating should be based on the facts and items having later chronology.

The closed complexes with Cimmerian features were identified based on the thesis that cultural types can be differentiated when considering a concrete archaeological culture. The cultural belonging of the group of sepulchres from Shirakavan, Vardakar, Spandaryan, Mantash, Gyumri, Voskehask and other burial grounds included in our sample suggests the need of dating those to a somewhat later period. Hereby, the discussed sepulchres of Shirak, in aggregate, could be dated to the end of VIII – VII centuries B.C.

Garegin Tumanyan – Doctor of Sciences in History, Senior Researcher at the Department of Early Archaeology of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: Bronze and Iron Age cultures of the Armenian Highland, funerary rites, Cimmerian archaeological culture, cultural relationships. Author of 5 books and 68 scientific articles. ORCID: 0000-0002-6696-0093. gstumanyan@gmail.com